

Ս. ԾՆՆՈՒԹԱՆ ԱՌՔԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՔԻՆ - ՀԻՆՐԱՍԻՐՈՒՔԻՆ

*18 Յունուար 2006
Բեթլեհեմ*

Ոչ տարբեր քան նախանցեալ տարիները այս տարի ալ Ս. ԾՆՆՈՒԹԱՆ նախօրէին, Յունուար 18ի երեկոյեան Հայոց Պատրիարքութեան հովանու ներքեւ, Բեթլեհեմի Հայոց Վանքի տեսուչ հոգեջ. Խաթ Շունտուրեան ճոխ ընդունելութիւն մը հեղինակեց մոյն վանքի վերջերս նորոգուած մառաններու մէջ, որոնք այսօր արդիական սրահի մը բոլոր պայմանները կը լրացնեն շնորհիւ Սպանական կառավարութեան իշխանավայել ներդրումին:

Ժամը 7:30ին սրահ ժամանեց Պաղեստինեան Իշխանութեան նախագահ Մահմուտ Ապաս իր շքախմբով ու դիմաւորուեցաւ Ս. Աթոռի Գահակալ Թորգոմ Արքեպս. Մանուկեանի եւ Արիս Եպս. Շիրվանեանի կողմէ:

Երուսաղէմի թէ Բեթլեհեմի գաղութի ներկայացուցիչներ թէ շարք մը հիւրերու որոտընդոտ ընդունելութենէ ետք խօսք առաւ նախագահ Ապաս ու անդրադարձաւ Հայ ու Արաբ ժողովուրդներու պատմական բարեկամութեան ապա նաեւ Հայ թէ Պաղեստինցի ժողովուրդներու իրար կարեկից թէ ցաւակից ըլլալու իրողութեան նկատի առնելով երկու ժողովուրդներու գրեթէ նման ազատագրական պայքարը թէ անցեալի բռնի տեղահանութիւնը:



*Ձախէն աջ՝ Նախագահ Ապաս, Սրբազան Պատրիարք Հայր եւ
Հ.Ս.Ը.Ս. երուսաղէմի Ատենապետ եղբ. Ս. Սահակեան*

Վերջապէս Մահմուտ Ապաս թուարկելէ ետք Հայ ժողովուրդի արժանիքները ըսաւ թէ "մենք Արաբներս երբ կը հանդիպինք կեանքի մէջ յաջողած աշխատունակ շէն ու շինարար որեւէ անձի կ'ըսենք այս մարդը հայ ըլլալու է":

Հայ ներկայութեան անուամբ խօսք առաւ տիար Ալպէր Աղազարեան ու իր հիանալի Արաբերէնով շնորհակալութիւն յայտնելէ ետք Պրն. նախագահին սրամիտ մեկնաբանութեամբ մը կ'ամբողջացնէ իր խօսքը ըսելով թէ "Պաղեստինի Իշխանութեան առաջին նախագահ Եասէր Արաֆատ քանի մը անգամ ըսած է թէ ինք ոչ թէ ինքզինք մօտ կը նկատէ Հայոց այլ ինքնին Հայ է ու

մականունն է "Արաֆաթեան": Մենք Հայերս մեր տուներու թէ տոհմերու մէջ փնտրեցինք "Արաֆաթեան" ազգանունը դժուարացանք ու չգտանք, բայց մինչ այդ գտանք շատ ու շատ "Ապպասեան" ազգանուններ":



Ս. Ծննդեան Այրը Հայոց զանգակատունով

Սրահի համակ ներկայութիւնը նկարահանուեցաւ նախագահի հետ, որը սիրալիիր ու համբերութեամբ ընդունեց բոլորի մօտեցումը ու սրահէն բաժնուեցաւ բարձր տրամադրութեամբ:

Կէս գիշերուայ Ս. Ծննդեան պատարագին, նախագահը անձնապէս ներկայ գտնուեցաւ, բացական անոնք էին, որոնք լայն ժպիտով ներկայ գտնուեցան միայն երկու ժամ առաջ ընթացք առնող ընդունելութեան բայց ոչ Քրիստոսի Ս. Ծննդեան հոգեպարատ արարողութեան: Նախագահը շրջապատող գաղտնի ոստիկանները շատ աւելին կը հաշուէին քան "նորածին մանուկը" շրջապատող Հայ Քրիստոնեանները:



Հ.Ս.Ը.Ս.ի վարչութիւնը նկարուած Պաղեստինի նախագահի եւ Սրբ. Պատրիարք Հօր հետ



Արք. Պատրիարք Հայրը Քրիստոսի Այրի վրայ կը մատուցանէ Ա. Ծննդեան Պատարագը